ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

Հոգիս Քանանեան.

Քու ուշացած նամակը դարձեալ ուշ հասաւ իմ ձեռ և ես շտապում եմ որքան կարելի է շուտով գրել նորա պատասխանը, որ վերանորոգուի մեր խանգարուած Թղթակցութիւնը, որից առաջները մեզ մեծ բարոյական օգուտներ ունէինք և այժմ մնացել է միայն նորա յիշատակը։ Այո, սիրելի Գէորգ. ես յետ չեմ կենում իմ առաջարկութիւնիցն Թէ՝ մեր «ուղարկիր» խօսքը պիտի ունենայ նշանակութիւն և վերջընթեր (предпослѣднiй) նամակս քեզ յայտնեց որ՝ ես դորա ներհակ չեմ ներգործել. բայց Թէ դու ինձ տեսնէիր իմ ներգործութիւնս այստեղ (որ ես անպարկեշտութիւն եմ համարում քեզ ասելը) այն ժամանակ դու և Թիմուրեանը կ'վկայէիք Թէ ո՛րքան նուիրական է ինձ համար որպէս նիցէ համոզմունքը։ Կրկին անգամ ասում եմ, ես յետ չեմ կենում իմ այն խօսքից, որ ասել եմ այն ժամանակ, երբ որ մեր առողջամտութիւնն է տիրել և ոչ տաքացած ուղեղը։ Թո՛ղնենք այս։ Ստացիր ռոմանըդ։

Ափսո՜ս որ չեմ կարողանում ցոյց տալ նոր շինած մայրերըս. հրաշալի և անզուգական գիւտ է այդ մեր տպարանի համար. օրացոյց, Եզոփոս և Ռուսա-Հայ բառարանի սկիզբը քեզ կ'ապացուցանեն շուտով Թէ ի՛նչ օգուտներ գիտեմ ես քաղել յաջողակ հանգամանքից։ Արճիճեայ տառերդ և նորաձև տառարանը (որ կ'հաւանիս Աստծով) շուտով կ'ստանաս. միամիտ եղիր։ Թիմուրեանի լռութիւնը ինձ ոչ Թէ զարմացնում է, այլ և զայրացնում է. պատճառը չի գրելուդ պատճառը, ի՞նչ է։ Միթէ Թագցնում ես նորա կողմանէ մի աններելի գնացքն 'ի զո՞ւր։ Գամառը հաւանել ես. շատ ուրախ եմ։ Միւսը աւել կ'հաւանես։ Ես քեզ խնդրել էի անցեալ անգամ ինձ փոքր ինչ

---

*) Տես «Մուրճ» № 5.

օգնութիւն անել, եթէ դու չես կարող, աշխատի՛ր, խնդրեմ, տեսնել Սանասարեանին. նա ինձ խոստացել էր մօտ 200 մանէթ տալ. ես վերջի ժամանակ չի կարողացայ նորան տեսնելու (հիւանդ էի). այնպէս մնաց. նա գնաց Մոսկով: Երբ որ տեսնես նորան՝ կարգադրէ՛ այնպէս որ Խալաթովը միշտ ստանայ ինձանից կամ քեզանից և վարձ չի պահանջած ուղարկէ Թիֆլիս. Սանասարեանը գիտէ այդ մասին և ինձ խօսք տուել է: Տպարանական գործը այժմ այսպէս է. մենք ունինք ամէն հարկաւոր բաները. շուտով կ'ստանանք մամուլը պր. Իզմիրեանից. կ'տանք Եօնսօնի 150 մանէթ պարտքը և կը բանանք մեր սեպհականը: Ես կանխագոյն պատրաստել եմ 3 հատ գրաշար, որ խիստ արագ շարում են: Բռօսսէն և Բէռոյեվը մեզ տալիս են մեծ օգուտ իւրեանց տպելու գրքերով, որ մեր մօտ կ'լինի: Թիֆլիզից ես խնդրում են «մեր գեղեցիկ տառերով և տիպով» տպել մի աշխատութիւն. այդ լաւ է որ՝ մեր տպարանի (որ надѣлѣ դեռ ես չի կայ) անունը հեռուումը լաւ ձայն ունի: Ստացայ Փարիզից, Վեննետիկից և Կոնստանդնուպօլից գովասանք. այնտեղի օրագրներումը «ազգային» մասումը՝ մեր անունը հռչակուած է, լսի՞լ ես: Դիւլօրիէն մեզ կամում է ունենալ գործակատար իւր Հայոց մասին աշխատութեանցը և հրատարակել է իր օրագրի մէջ ես և մեր աշխատութիւնքը տպելու և հրատարակելու է Revue Orientale օրագրումը: Մի՞թէ այդ լաւ լուր չէ՞: Մի ուրեմն քնիլ. յայտնէ՛ այս ամէնը Թիմուրեանին (եթէ ես գրեմ 'ի զուր է. նա չի ուզում, երևի, ինձ հետ թղթակցութիւն ունենալ): Հայոց գիրքերու каталогъ-ի (ցուցակ) մասին առաջի անգամն եմ լըսում քեզանից. այն ինչ նամակիցս երևում է որ ուրիշ անգամ էլ յիշած ես եղել այդ մասին. բարի է. միւս նամակումս կ'գրեմ խիստ լաւը: Այս անգամ ամեն ճիգս 'ի գործ դրի և գտայ 11 կոպէկ այս նամակի ծրարագրի համար. միւս անգամուայ նամակիս ուշանալը իսկապէս փող չ'ունենալս, կ'լինի. Աստուած է վկայ որ սուտ չեմ ասում: Վերջապէս ծիծաղելի բան է որ ես գործ եմ կատարում առանց մի կոպէկի. հոգիս, աշխատէ 'ի սէր քեզ սրբազան զգացմունքի, ազատել ինձ այս աններելի դրութիւնից. ուղիղ հաշուով այս վերջի անգամն է որ ես առաջուայ պէս նեղուած եմ տպարանական պարտատէրներից. Թիֆլիս, Ցաժտարխան, Նախիջևան և այլ քաղաքներ այբբենարան չուղարկելդ մեզ վնասեց. ես разсчитывалъ նոցա վրայ. ուրիշ աղբիւր բացի մեր տպած գրքերից ունի՞նք, ինքըդ ասա. բայց միտք արա որ՝ ես անդադար մարդիկ եմ բանացնում տառ թափել, տպել, ուղարկել, կազմել, մայրեր

շինել, թուղթ կայլն կայլն, այս ամենը ոչ ոք ձրի չի անիլ. խնայէ ինձ. միթէ ես մեղք չեմ։ Ուրեմն, ես սպասում եմ քեզանից շաբաթ օր... փող։ Բայց ինչ որ ուրիշ բաներ ապսպրել էի վերջընթեր նամակներումս՝ կատարէ ճիշտ։ Ֆիղանեանի տոմսակները պէտք է ստանալ, ամո՞թ է։ Ինչու Բուդաղեանին գիր չես գրում. նա խիստ վիրաւորուած է քեզանից. ասում է թէ՝ ես նորա խօսքին հաւատալով մի նշանաւոր մարդու հետ խօսեցայ, վճռեցի և... ամօթով և սևերես մնացի։ Ի՞նչ կ'ասես։ Միթէ այսուհետև կարելի է մեր կոպիտ հայ վաճառականներու հետ բան բռնել. բայց պիտի իմանաս որ Բուդաղեանը աղիվ հոգիով մարդ է։ Միթէ չգիտես որ Քերոբը արտասահմանումն է. հա. նա այնտեղ է, ես կարծում էի որ ես քեզ գրել եմ այդ մասին. ահա արդէն ամիս է որ նա բժշկուելու համար գնացել է այնտեղ, և ինձ Ռէյցնախից գիր է գրում։ Շատ դողում է այնտեղի կեանքը, բայց առանձին բան չեմ գտնում նորա նամակումը. вѣрно у него зубъ съ свистункой, ինչպէս Добчинскій-ի։

Մնամ մ. ք. ս. Ռափայէլ. ե. ք.

1857 25 յունիսի
Ս. Պ. Բուրգ։

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Երեկ, այս ամսիս 2-ին մի փոքրիկ նամակ ուղարկեցի և նրա հետը մի օրինակ Ռօբինզօնի, որ այժմ պիտի ստացած լինիս։ Ես զարմանում եմ որ այսքան ժամանակ ինձ նամակ չես գրում և չես գրում և չես տեղեկացնում մամուլի մասին որոյ գնելը քեզ է յանձնած. պր. Իզմիրեանցն ևս չգիտէ քո լռութեան պատճառը։ Ի՞նչ ասել կ'ուզէ որ՝ դորանով բանը ձախողակ է գնում. դու այդ իմանում ես, ուրեմն մեր դանդաղութեան վատ հետևանքը գրելն անգամ աւելորդ եմ համարում։ Նորերումս երկու մեծ օգուտ ձեռներէս փախաւ. Բէրոյեանը իւր գրքի համար պայման կապում է տեղւոյս Ակադեմիոյ տպարանապետի հետ և մի թուղթ գրեց Գոթիէին. ևս և մի հայ մարդ երկար ժամանակ կամելով իմ մօտ մի բազմահատոր գիրք տպելու՝ յուսահատեցաւ և մի շաբաթ առաջ ինձ տուած խօսքը յետ առաւ և տուեց գիրքը տպելու ակադեմիա։—Գոնէ այսուհետև շտապենք։ Ոչ ոք չի կայ մեզ նման արի և միևնոյն ժամանակ ոչ ոք մեզ պէս տարաբախտ չէ. հաւատում ես թէ ոչ։ Ասա խնդրեմ՝ ի՞նչ պատասխան ստացար պր. Աֆթանդիլեա-

նից կամ Թիմուրեանից. թէ ոչինչ չես ստանում, նորից և նորից խնդրէ օգնութիւն։ Դու նախընթաց նամակներիցս լաւ գիտես, որ մենք առանց նոցա օգնութեան, թէև մամուլ ստանանք ևս, ոչինչ յառաջացնել չենք կարող։ Հաւատա՝ ես պատրաստել եմ յայտարարութիւնը, եթէ ցէնղուռից դուրս գայ, իսկոյն կ'ուղարկեմ քեզ և այնուհետև խիստ շուտով կ'տպեմ։ Խնդրեմ գրէ թ՞նչպէս բաժանեցիր այբբենարանները, որոնց մասին Սերովբէն և ես գրել էինք ձեզ և ձրքան, որ ես նոցա խնդրագիր ևս գրեմ։ Շուտով գրէ նամակ և պատասխան։

Քու միշտ Ռափայէլ հաւատարիմ բարեկամը։

Հոկտ. 4.

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Վերջապէս ստացայ քեզանից վաղուցուայ սպասած պատասխանը. շնորհակալ եմ։ Թողնենք յառաջաբանները և սկսենք բան խօսելու։ Տպարանը գրեթէ պատրաստ է. այսինքն մամուլը, սենեակը, մի ձև (մանը) տառերը իմ մօտ են. բայց որովհետև ես տպարանումը (Եօնսօնի) պարտք ունիմ և Շանշեանցը որ խոստացել էր ազատել՝ դեռ ևս չկատարեց խօսքը՝ այդ պատճառաւ լիակատար չեմ կարող անուանել. Շանշեանցը փեստրուարին տալու է։ Բայց ցանկալի էր, որ աւել շուտով կատարուէր. Մանասարեանցը ևս, որ խոստացել է տպել իմ Հայոց դիւցազունքը՝ այժմ վճռական բան չի ասում։ Ես այժմ հրամայել եմ օրուաշէիք շարել տալու Բեռոյեվի համար (բառարանի) և դորանով միայն զբաղած է բոլոր տպարանը. գուցէ 2 շաբաթից կ'տեսնի մեր գեղեցիկ մանր տառերը։ Ռոբինզոնները ուղարկել չեմ կարող. տպարանից չեն տալիս. խնդրեմ ստանաս այն փողը որ հաւաքել էք. ես ստացածովս ճամբայ կ'դնեմ 100 հատ գիրքը առանց ժամանակ կորցնելու։ Անանիան այստեղ է. դեռ ևս նրա հետ լաւ չեմ խօսել. նա ինձ ասելու բաներ ունէր. Ինաց առ ժամանակ։ Նոր լուր ունիս, գրէ։ Ճառը կ'ստանաս միւս անգամ, այժմ Մսերին նամակ եմ պատրաստում ըստ դիպաց նորա օրագրին։

Մնաս բարև։ Խոնարհ եղբայր քո Ռափայէլ

Յունուարի 4.
1858.

Սիրելի Գէորգ,

Քու մի նամակին երկու պատասխան գրեցի և մինչև այսօր չգիտեմ ստացել ես, թէ ոչ, մանաւանդ երկրորդ նամակը այնքան կարևոր էր, որ—չգիտեմ—կարելի՞ էր արդեօք նորան անպատասխան թողնելու, տուի՞ր արդեօք նորա միջի գիրը պր. Իզմիրեանին, որ նա հասցնէր Հ. Մսերին և կամ յայտնեցի՞ր մնացած բաները պր. Իզմիրեանցին, որ նա անպատճառ կամենում կը լինի իմանալու, ես միանգամայն անտեղեակ եմ, դարձեալ կրկնում եմ, ասա՛ Հ. Մսերին, որ իմ նամակը անպատճառ տալէ, բայց իմ անուան տեղ ստորագրէ Թողթակից և այդ մականունամբ ես յաճախ ուղարկելու եմ նորա պատուական օրագրին պէս-պէս պարունակութեան հատուածներ։ Եթէ նա դէպի վատ կողմը ուղէ մեկնելու իմ անկողմնապահ կարծիքը, դու, Ջան դիր նորան միամտացնելու իմ մտերմութեան մասին, միայն ազգի իսկական օգուտը ինձ ստիպեց և միշտ ստիպելու է ճշմարտախօս լինել թէ կենդանի խօսքով և թէ գրութեամբ և ամեն ինչ ձեռնարկութիւն յանուն ազգի՝ միշտ մուտ ունենալու է իմ սրտի մէջ և ցնծութեան արձագանք պիտի լսուի այնտեղէն։ Ռօբինզոնի մասին գրել էի և գրում եմ. պէտք է ուղարկես փողը, որ կարողանամ ջհուտների ձեռքէն ազատելու։ Թիմուրեանէն գիր ստացայ, մի քանի յոյսեր տալիս է, նիւթական ոչինչ չի կայ։

Մնաս բարև միշտ քեզ հաւատարիմ Ռափայէլ

1858, 15 յունուարի.
Ս. Պետերբուրգ։

Սիրեցեալ և բազմակարօտ եղբայր.

Ահա չորրորդ նամակն է որ մին մինի քամակից ուղարկում եմ քեզ և առ մեծի զարմացմանս նոցա պատասխանը չեմ ստանում. այն ինչ դու ինձ անպատճառ պիտի միամտացնէիր ինչպէս սրտակից բարեկամին է վայել. այն յոյսերովն, որով միայն կարող է ոտքի վրայ հաստատ կանգնել մեր ուխտի արգասիքն, որ իմ կողմանէ հազար ու մէկ զոհերով վերջապէս էացաւ որ մի ժամանակ միայն իսկական ցանկութիւն էր երեւում։ Քանանեան՝ ես գիտեմ քու բարեացակամութիւնը. բայց դու ինձ հաւատացուր որ բարի կամենալն նոյն է որ բարի

անելն. այն ժամանակ ես տեղիք չեմ ունենալ քեզ անհանգիստ անելու. նմանապէս եթէ ես իմանայի որ մեր գործը երեքիս վրայ չէ լինելու, այլ պիտի ծանրանայ իմ վրայ՝ այն ժամանակ գուցէ ես մի ուրիշ ընթացք կ'ունենայի. բայց անդուստ ի վերուստ ես վստահած եմ ձեր երկուսի վրայ ինչպէս մի պինդ պատի, և միշտ սխալել եմ. այդ յոյսերն որ ես ունիմ ձեր օգնութեան մասին, եթէ անկատարելի են, եթէ լոկ խօսքեր են՝ ասա առանց ամաչելու. հաւատացիր, որ ես իմ պահանջմունքը խիստ կ'չափաւորեմ, գուցէ միանգամայն կ'կտրեմ ևս. բայց քու խօսքն և գրութիւնը միշտ դրա ներհակն են եղել և այդ պատճառաւ դուք եղել էք իմ ապաւէնը։ Ես իմ աներկիւղ և արի բնաւորութեամբ առաջուայ պէս առաջ եմ գնում մեծամեծ ձեռնարկութիւններով, որոյ ապացոյցը կ'տեսնես 1 շաբաթէն. նախ և առաջ ես կարծելով թէ դուք ինձ հէ միայն ըստ ձեր կարեաց կ'օգնէք, այլ և այլոց ևս կ'յորդորէք օգնելու՝ ես առաւել և առաւել յանդուգն դարձայ գործերումս. եթէ այժմ յետ կենաք՝ 'իհարկէ որ ես 1) կամ ամօթով պիտի յետ քաշուեմ, 2) կամ նոր հնար պիտի գտնեմ գլուխ բերելու, 3) և կամ թէ պիտի կորչեմ, ճնշուեմ գործոցս ծանրութեան տակ։ Մի՞թէ դուք պաղարիւն հանդիսատես էք լինելու իմ չարաչար նահատակութեանը։ Մտիկ արէք որ այդ խիստ վատ և անխիղճ բան կ'լինի ձեր կողմանէ. և այսուհետև ազնիւ գործոց մէջ մասն ունենալն պիտի միշտ ամաչցնէ ձեզ։ Մի՞թէ դուք փոքրոգի դարձաք մինչև այդ աստիճան։ Լաւ չէ։ Մսերի մասին ինձ միամտեցրուր կամ մի բան գրէ։ Զէ՞ք կամենում 100 Ռոբինզոն ստանալու։ Իզմիրեանցը գնաց։

Ռափայէլ

1858, յունուարի 21
Ս.-Գ.բուրգ։